ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ УПРАВЛЕН

№ 01-60

«04» 07 2012թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ.
Тел. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 2012 թվականի հունիս ամսվա ընթացքում համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունը և ընդունված որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Մուտք՝ 6066-12
«04» 07 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«05» հունիսի 2012թ. *թիվ 8*

ՄԻԼՎԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԱՐՄԱՎԻՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի առաջին, երրորդ կետերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006թվականի դեկտեմբերի 28-ի <Համայնքային ծառայողների վերապատրաստման կարգը սահմանելու մասին> N 25-Ն հրամանով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Միլվա Առաքելյանին 2012 թվականի հունիսի 5-ից մինչև հունիսի 15-ը գործուղել քաղաք Արմավիր՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան՝ համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով:*
2. *Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:*

Ոսկեհատ համայնքի ղեկավար Գ. Ներսիսյան

2012թվական հունիսի 5
Գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

«27» հունիսի 2012թ. թիվ 5-Ա

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի „26„ „06„ 2012թ-ի <Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության բերման> վերաբերյալ N 2 որոշման.

որոշում եմ՝

1. Ոսկեհատ համայնքի քաղաքացիական պաշտպանության համակարգը <Բարձր> պատրաստականության աստիճանի բերելու նպատակով.

1.1 հանձնարարել համայնքի ՔՊ շտաբին՝

- սահմանել ղեկավար կազմի շուրջօրյա աշխատանքային ռեժիմ և աշխատատեղերում ու կառավարման կետերում՝ շուրջօրյա հերթապահության,
- ստուգել կապի և ազդարարման համակարգի պատրաստականության վիճակը, մարզի ՔՊ շտաբ ներկայացնել հայտ անհրաժեշտ լրացուցիչ կապուղիների վերաբերյալ,
- իրականացնել քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում,
- պատսպարվողների ընդունման համար նախապատրաստել առկա պաշտպանական կառույցները, իրականացնել բնակչության ամրագրման հաշվարկների ճշգրտում,
- նյութական միջոցների պաշարների, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի /ջրաղբյուրներ, արտեզյան հորեր, ՕԿՋ-ներ/ պաշտպանության միջոցառումների նախապատրաստում,
- լուսաքողարկման ռեժիմի ապահովման նպատակով նախապատրաստական միջոցառումների իրականացում,
- հատուկ կարևորության և արխիվային փաստաթղթերի նախապատրաստում՝ պահպանման հանձնելու համար /եթե այդպիսիք կան/,

1.2 տարահանման հանձնաժողովի նախագահին՝

- նախապատրաստել տարահանման հավաքակայանները և նստեցման կետերը, ճշտել տարահանման և տրանսպորտային միջոցների հաշվարկները

1.3 ՔՊ ծառայությունների պետերին և կազմավորումների հրամանատարներին՝

- ճշտել ՔՊ կազմավորումների կազմերը, անհրաժեշտ գույքով և տեխնիկայով հագեցվածությունը, հնարավորինս համալրել և անհրաժեշտության դեպքում հայտ ներկայացնել մարզի ՔՊ շտաբ՝ գույքի և տեխնիկայի պահանջարկի վերաբերյալ,
- կազմակերպել մարզի ՔՊ գույքի պահեստներից անհատական պաշտպանության միջոցների տեղափոխում բաշխման կետ և բաշխման նախապատրաստում,
- գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության միջոցառումների նախապատրաստում,
- ճառագայթային և քիմիական հրավիճակի դիտարկումների նախապատրաստում,
- հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում,

2. Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Ոսկեհատ համայնքի ղեկավար՝ Գ. Ներսիսյան

2012թ. հունիսի 27
գ. Ոսկեհատ